Մեծերի կարծիքը Զոհրապի մասին

Արշակ Չոպանյան

Իր գործունեության ձևերեն այն, զոր ամենեն ավելի հրայրքով, հեշտանքով կկատարեր, գրականությունն էր: Կպաշտեր գրականությունը:

Օննիկ Չիֆթե-Սարաֆ

Անոր անունը ծգողություն մը ունի: Հմայք մը կա անոր գրելակերպին, խոհելակերպին ու ապրելակերպին մեջ: Հմայած է ան գրողն ալ, չգրողն ալ, հինն ալ, նորն ալ հավասարապես... Մենք՝ նորերս, անվերապահ խանդով մը կպաշտենք զայն:

Արշակ Ալպոյաճյան

Իր կյանքն ու գրականությունը ընդունված կարգերու, պայմանադրական ըմբռնումներու, կոխկրտված ճամբաներու դեմ ընդվզում մըն էր: Անիկա մաքառող մըն էր այն կեղծիքներու դեմ, որոնք զմեզ կը շրջապատեն այն գիտություններունց դեմ, որոնք մեր ընտանեկան շենքը կը քայքայեն, այն վանքերուն դեմ, որոնք մեր ընկերության հիմքերը կը քանդեն:

Սիպիլ

Սակայն իր ամենեն նշանավոր հատկությունը պիտի մնա գրելու հազվագյուտ ճաշակը, ինչ որ մեծ գրագետները կը հատկանշեն: Կարելի չէ գտնել տող մը, զոր ավելորդ համարես իր գրվածքներուն մեջ, կամ վայրկյան մը ծանծրանաս իր երկերուն ընթերցումին մեջ:

Ռուբեն Զարդարյան

Իր նորավեպերու շարքին հետ զուգահեռաբար՝ բոլորովին նոր սեռի մը գրական դիմասփվերներու վրծնումն է, որ առաջին անգամ ըլլալով՝ փորձած է Զոհրապը մեր մեջ՝ ներկայացնելով մեկ քանի հատկանշական գծերու մեջ գրագետներ և հանրային գործիչներ,- այնպես, ինչպես որ են անոնք՝ իրենց առավելություններով ու թերություններով, և իբրև դիմանկարիչ ևս՝ Գրիգոր Զոհրապ մնացած է մինչև այժմ անմրցելի:

Ալեքսանդր Շիրվանզադե

Ես Գրիգոր Զոհրապին ճանաչում էի հեռվեն, կարդացել էի նրա գեղեցիկ պատմվածքները Կ. Պոլսի կյանքից: Ուղղությամբ ռեալիստ էր, ուներ շատ սիրուն ոճ, միանգամայն զերծ պոլսական սեթևեթանքից և ավելորդ հակագեղարվեստական պչրանքից:



Վահրամ Փափազյան

Նրա պրոֆեսիոնալ զբաղմունքը ավելի շատ արդյունք էր մի մարդագիտության և գուցե այդ ժամանակները Պոլսում վխտացող ի պաշտոնե փաստաբանների շարքում Զոհրապը փաստաբան էր նախ և առաջ իր կոչումով: